

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի (այուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածից «, «Վարչարարության և վարչական վարույթի մասին»» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 2-րդ կետում «մինչև մեկ տարի» բառերը փոխարինել «մեկ տարի կամ պակաս».

2) 14-րդ կետը «շուկայում առևտրին» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կամ 8-րդ կետով նախատեսված արժեթղթերը թողարկողների» բառերով.

3) 28-րդ կետում «սույն օրենքով սահմանված կարգով ներդրումային ծառայությունների մատուցման» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ներդրումային ընկերության գործունեության» բառերով.

4) 38-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«38. փաստը կամ տեղեկությունն էական է համարվում, եթե ողջամիտ ներդրողը կկարևորեր այն տվյալ արժեթուղթը գնելու կամ վաճառելու վերաբերյալ որոշում կայացնելիս.»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 4. Սույն բաժնի կիրառման շրջանակը

1. Սույն բաժնի դրույթները տարածվում են միայն հետևյալ արժեթղթերի վրա՝

1) բաժնետոմսեր, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթղթեր,

2) պարտատոմսեր և պարտքային այլ արժեթղթեր,

3) սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով սահմանված արժեթղթերի վրա հիմնված դեպոզիտար ստացականներ,

4) ցանկացած այլ արժեթուղթ, որն իրավունք է տալիս ձեռք բերել կամ վաճառել սույն կետի 1-ին կամ 2-րդ կետով սահմանված արժեթղթերը, կամ հանգեցնում է կանխիկ վերջնահաշվարկի, որը որոշվում է կախված դրանց հիմքում ընկած արժեթղթերից, արտարժույթից, տոկոսադրույքից, ինդեքսից կամ այլ ակտիվից:

Կենտրոնական բանկը կարող է իր նորմատիվ իրավական ակտերով սահմանել չափանիշներ, որոնց չբավարարելու դեպքում սույն մասի 4-րդ կետով նախատեսված արժեթղթերի վրա սույն բաժնի դրույթները չեն տարածվում:

2. Սույն բաժնի դրույթները չեն տարածվում սույն հոդվածի առաջին մասում թվարկված արժեթղթերի վրա, եթե դրանք հանդիսանում են՝

1) Հայաստանի Հանրապետության, Կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության համայնքների կողմից թողարկված կամ երաշխավորված արժեթղթեր.

2) Կենտրոնական բանկի սահմանած օտարերկրյա պետությունների ցանկում ընդգրկված որևէ պետության, նրա կենտրոնական բանկի կամ տեղական կառավարման մարմնի կողմից թողարկված կամ երաշխավորված արժեթղթեր.

3) Կենտրոնական բանկի սահմանած ցանկում ընդգրկված միջազգային կազմակերպությունների թողարկած ոչ բաժնային արժեթղթեր.

4) կրոնական, կրթական, բարեգործական և այլ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կրոնական, կրթական կամ բարեգործական նպատակներով թողարկված արժեթղթեր.

5) բանկերի կողմից շարունակական ձևով թողարկվող ոչ բաժնային արժեթղթեր, եթե դրանք՝ ա. փոխարկելի կամ փոխանակելի չեն,

բ. չեն հավաստում որևէ այլ տեսակի արժեթղթերի ձեռքբերման կամ բաժանորդագրման իրավունքներ, ինչպես նաև կապված չեն անանցյալ գործիքների հետ,

գ. հավաստում են դրամական միջոցների ավանդադրումը բանկում, և

դ. դրանց հատուցումը երաշխավորված է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

6) բանկերի կողմից շարունակական ձևով թողարկվող ոչ բաժնային արժեթղթեր, եթե առաջարկվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը 12 ամսվա ընթացքում չի գերազանցում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված մեծությունը և դրանք՝

ա. փոխարկելի կամ փոխանակելի չեն, և

բ. չեն հավաստում որևէ այլ տեսակի արժեթղթերի ձեռքբերման կամ բաժանորդագրման իրավունքներ, ինչպես նաև կապված չեն անանցյալ գործիքների հետ.

7) դրամական շուկայի գործիքներ.

8) բաց ներդրումային ֆոնդերի կողմից թողարկված արժեթղթեր:»:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

« 1. Ազդագրի գրանցման հայտը ներկայացնելու պահից մինչև արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման ժամկետի ավարտն ազդագրում ներառվող տեղեկությունների էական փոփոխության, նոր էական հանգամանք կամ փաստ ի հայտ գալու, այդ թվում՝ թողարկողի տարեկան կամ միջանկյալ հաշվետվությունը հրապարակման դեպքում, կամ ազդագրում էական անճշտություն, թերություն հայտնաբերելու դեպքում թողարկողը կամ տեղաբաշխողը պարտավոր է այդ մասին տեղեկանալու օրվանից կամ այն օրվանից, երբ նա ակնհայտորեն կարող էր տեղեկանալ տվյալ փոփոխության մասին, 5 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ ներկայացնել ազդագրի լրացում: Թողարկողի տարեկան հաշվետվության հրապարակման դեպքում ազդագրի լրացում պետք է ներկայացվի թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից տարեկան հաշվետվությունը հաստատելու օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ թողարկողի միջանկյալ հաշվետվության հաստատման դեպքում ազդագրի լրացում պետք է ներկայացվի թողարկողի իրավասու մարմնի կողմից միջանկյալ հաշվետվությունը հաստատելու օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հոդված 5. Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «կրում է ոչ պարբերական բնույթ և» բառերը հանել.

2) լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող են սահմանվել սույն մասով նախատեսված գործունեությունը որպես անձի հիմնական գործունեության մաս գնահատելու չափանիշներ:»:

Հոդված 6. Օրենքի 28-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ստացած» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ներդրումային ընկերության գործունեության լիցենզիա ունեցող» բառերով.

2) 3-րդ մասի երկրորդ նախադասությունը հանել.

3) հոդվածը լրացնել 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները տարածվում են ներդրումային ընկերությունների վրա, եթե սույն օրենքով այլ կարգավորում նախատեսված չէ:»:

Հոդված 7. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«1. Արգելվում է Կենտրոնական բանկի կողմից որպես ներդրումային ընկերություն կամ դրա մասնաճյուղ (ներկայացուցչություն) չգրանցված անձանց կողմից «ներդրումային ընկերություն», «բրոքեր», «դիլեր», «հավատարմագրային կառավարիչ» կամ «պահառու» բառակապակցությունների, դրանց հոլովված ձևերի, օտար լեզվով այդ բառերի հայերեն տառադարձությունների, թարգմանությունների կամ դրանց գուգորությունների, ինչպես նաև գործարար ավանդույթի շրջանակներում ներդրումային ընկերության գործունեությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն բնութագրող անվանումների օգտագործումը իրենց անվան մեջ, գովազդներում, հրատարակային օֆերտայում կամ որևէ կերպ աջակցելը գովազդելուն, եթե դրանց օգտագործման իմաստից չի բխում որ խոսքը չի վերաբերում սույն օրենքով սահմանված ներդրումային ընկերության գործունեությանը, և եթե նման օգտագործման իրավունքը չի վերապահվել օրենքով կամ միջազգային պայմանագրով:»:

Հոդված 8. Օրենքի 30-րդ հոդվածը լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գործունեությունը կարգավորող օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից իր միջոցների կառավարման վրա:»:

Հոդված 9. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում «տասօրյա ժամկետում» բառերը փոխարինել «տաս աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 10. Օրենքի 33-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.
«Հոդված 33 Ներդրումային ընկերության գործունեության լիցենզիան

1. Արգելվում է ներդրումային ծառայությունների, ինչպես նաև սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ծառայության մատուցումը, դրանց մատուցման առաջարկությամբ հանդես գալը կամ դրանք իրականացնող անձ ներկայանալն առանց «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով տրված ներդրումային ընկերության գործունեության լիցենզիայի, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

2. Ներդրումային ընկերությունների լիցենզավորման կարգը և պայմանները սահմանվում են բացառապես «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Այլ օրենքներով լիցենզավորման վերաբերյալ այլ դրույթներ սահմանված լինելու դեպքում ներդրումային ընկերությունների համար գործում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:»:

Հոդված 11. Օրենքի 34-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 34. Ներդրումային ընկերությունների կողմից ոչ հիմնական ծառայությունների մատուցումը

1. Ներդրումային ընկերությունը կարող է մատուցել բոլոր ոչ հիմնական ծառայությունները, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով:

2. Ներդրումային ընկերությունը ոչ հիմնական ծառայության մատուցման դեպքում պարտավոր է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով այդ մասին նախապես, բայց ոչ ուշ, քան յուրաքանչյուր ոչ հիմնական ծառայությունը մատուցելուց 15 աշխատանքային օր առաջ, տեղեկացնել Կենտրոնական բանկին:»:

Հոդված 12. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում «ծառայությունների մատուցման լիցենզիայի» բառերը փոխարինել «ընկերության գործունեության լիցենզիայի կամ որևէ լրացուցիչ թույլտվության» բառերով:

Հոդված 13. Օրենքի 36-57-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 15. Օրենքի 59-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 16. Օրենքի 60-րդ հոդվածում «սույն օրենքով սահմանված մասնագիտական որակավորում ունեցող» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ համապատասխան պաշտոնի համար մասնագիտական գիտելիքների թեստավորում անցած և այդ թեստավորման արդյունքներով բավարար միավորներ հավաքած լինելը հավաստող վավեր վկայական ունեցող տվյալ պաշտոնի համար հավուր պատշաճին համապատասխանող» բառերով:

Հոդված 17. Օրենքի 64-րդ հոդվածի 4-րդ մասում «տաս օր» բառերը փոխարինել «տաս աշխատանքային օր» բառերով:

Հոդված 18. Օրենքի 67-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«3. Ներդրումային ծառայություններ մատուցող անձը, բացառությամբ բանկի, չի կարող իր հաճախորդի դրամական միջոցներն օգտագործել ի շահ իրեն կամ իր այլ հաճախորդների:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձը չի կարող իր հաճախորդի արժեթղթերն օգտագործել ի շահ իրեն կամ իր այլ հաճախորդների, եթե հաճախորդը չի տվել իր նախնական գրավոր համաձայնությունը:»:

Հոդված 19. Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասում «լիցենզիա» բառը փոխարինել «իրավունքը հավաստող լիցենզիայի ներդիր (ներդիրներ)» բառերով:

Հոդված 20. Օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ կետի վերջին նախադասությունում «ընդունման պահից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով:

Հոդված 21. Օրենքի 8-րդ գլխի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«ԳԼՈՒԽ 8

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՎ ԱՌԻԴԻՏԸ»:

Հոդված 22. Օրենքի 81-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 23. Օրենքի 83-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 83. Պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը

1. Ներդրումային ընկերությունը պարտավոր է մշտապես ունենալ գործող ինտերնետային կայք: Ներդրումային ընկերության ինտերնետային կայքում հրապարակման ենթակա տեղեկատվության նվազագույն կազմը, այդ տեղեկությունների հրապարակման պարբերականությունը, ինչպես նաև հրապարակման կարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

2. Ներդրումային ընկերությունները պարտավոր են ֆինանսական տարվա ավարտից հետո՝ չորսամսյա ժամկետում, իրենց ինտերնետային կայքում հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, իսկ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը՝ իրենց եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:

3. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել այն տեղեկությունները, որոնք ներդրումային ընկերությունների կողմից ենթակա են պարտադիր հրապարակման մամուլում և (կամ) տեղեկատվության այլ միջոցներով, ինչպես նաև այդ տեղեկությունների հրապարակման կարգը և պարբերականությունը:

4. Սույն հոդվածի համաձայն հրապարակման ենթակա տեղեկությունները պետք է մատչելի լինեն նաև ներդրումային ընկերության գտնվելու վայրում, նրա մասնաճյուղերում և ներկայացուցչություններում:

5. Ներդրումային ընկերության կողմից սույն հոդվածի համաձայն հրապարակվող տեղեկությունները պետք է լինեն հավաստի և ամբողջական:»:

Հոդված 24. Օրենքի 84-րդ հոդվածի 7-րդ մասում «ծառայողական տեղեկություններ» բառերը փոխարինել «ներդրումային» բառով:

Հոդված 25. Օրենքի 87-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 26. Օրենքի 90-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 90. Ներդրումային ընկերության լուծարումը

1. Ներդրումային ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ և լիցենզիան ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչելու հիմքերով ներդրումային ընկերության լուծարման կարգը և պայմանները սահմանվում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

2. Ներդրումային ընկերության սնանկության հիմքով նրա լուծարման կարգը և ներդրումային ընկերության անվճարունակության և սնանկության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և սպահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 27. Օրենքի 91-96-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 28. Օրենքի 10-րդ գլխի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Գլուխ 10

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ»:

Հոդված 29. Օրենքի 97-րդ հոդվածում.

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 97 Ներդրումային գաղտնիքը»,

2) 1-ին և 2-րդ մասերում «ծառայողական տեղեկատվություն (այսուհետ՝ նաև տեղեկություն)» բառերը փոխարինել «ներդրումային գաղտնիք» բառերով:

Հոդված 30. Օրենքի 98-րդ հոդվածում.

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 98 Ներդրումային գաղտնիքի հրապարակումը»,

2) 1-ին, 3-րդ և 4-րդ մասերում «ծառայողական տեղեկությունների» բառերը փոխարինել «ներդրումային գաղտնիքի» բառերով,

3) 1-ին մասում «այդ տեղեկությունը» բառերը փոխարինել «ներդրումային գաղտնիք կազմող տեղեկությունը» բառերով,

4) 1-ին և 2-րդ մասերում «ծառայողական տեղեկության» բառերը փոխարինել «ներդրումային գաղտնիքի» բառերով,

5) 2-րդ մասերում «ծառայողական տեղեկություն» բառերը փոխարինել «ներդրումային գաղտնիք» բառերով:

Հոդված 31. Օրենքի 99-րդ հոդվածում.

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 99 Ներդրումային գաղտնիքը պահպանելու պարտականությունը»,

2) 1-ին և 3-րդ մասերում «ծառայողական տեղեկությունները», և 2-րդ մասում «ծառայողական տեղեկություն» բառերը փոխարինել «ներդրումային գաղտնիքը» բառերով,

3) 2-րդ մասում «դրանք» բառը փոխարինել «այն» բառով:

Հոդված 32. Օրենքի 100-րդ հոդվածում.

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 100 Ներդրումային գաղտնիքի տրամադրումը»,

2) 1-ին և 2-րդ մասերում «ծառայողական տեղեկությունների» բառերը փոխարինել «ներդրումային գաղտնիքի» բառերով,

3) 2-րդ մասում «ծառայողական տեղեկությունները» բառերը փոխարինել «ներդրումային գաղտնիքը» բառերով, «վստահված են» բառերը փոխարինել «վստահված է» բառերով, «հայտնի են» բառերը փոխարինել «հայտնի է» բառերով, իսկ «դրանք» բառը փոխարինել «այն» բառով:

Հոդված 33. Օրենքի 101-րդ հոդվածում.

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 101 Ներդրումային գաղտնիքի տրամադրումը քաղաքացիական և քրեական գործերով»,

2) 1-ին մասում «ծառայողական տեղեկությունները» բառերը փոխարինել «ներդրումային գաղտնիքը» բառերով,

3) 2-րդ և 3-րդ մասերում «ծառայողական տեղեկությունների» բառերը փոխարինել «ներդրումային գաղտնիքի» բառերով:

Հոդված 34. Օրենքի 102-րդ հոդվածում.

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 102 Ներդրումային գաղտնիքի տրամադրումը հաճախորդի ժառանգներից (իրավահաջորդներին)»,

2) «ծառայողական տեղեկությունների» բառերը փոխարինել «ներդրումային գաղտնիքի» բառերով:

Հողված 35. Օրենքի 103-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «սույն օրենքով սահմանված կարգով» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված» բառերով, իսկ «ստացած» բառը փոխարինել «ունեցող» բառով.

2) 2-րդ մասից հանել «սույն օրենքով սահմանված կարգով տրված» և «սույն հոդվածի 1-ին մասով սահմանված» բառերը.

3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3. Օպերատորի լիցենզավորման կարգը և պայմանները սահմանվում են բացառապես «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Այլ օրենքներով լիցենզավորման վերաբերյալ այլ դրույթներ սահմանված լինելու դեպքում օպերատորի համար գործում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները.

4) 7-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«Եթե սույն մասին համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերով օպերատորին թույլատրված է իրականացնել լրացուցիչ գործունեության այլ տեսակներ, ապա սույն օրենքի 115-րդ հոդվածով սահմանված շուկայի կանոնները պետք է ներառեն նաև այդ գործունեության տեսակների իրականացման կանոնները:».

5) 9-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«9. Արգելվում է Կենտրոնական բանկի կողմից որպես օպերատոր կամ դրա մասնաճյուղ (ներկայացուցչություն) չգրանցված անձանց (մաճանց խմբի) կողմից «արժեթղթերի կարգավորվող շուկա» կամ «ֆոնդային բորսա» բառակապակցությունների, դրանց հոլովված ձևերի, օտար լեզվով այդ բառերի հայերեն տառադարձությունների, թարգմանությունների կամ դրանց գուգորությունների օգտագործումն իրենց անվան մեջ, գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ որևէ կերպ աջակցելը գովազդելուն, եթե դրանց օգտագործման իմաստից չի բխում որ խոսքը չի վերաբերում շուկայի կամ օպերատորի՝ սույն օրենքով սահմանված գործունեությանը, և եթե նման օգտագործման իրավունքը չի վերապահվել օրենքով կամ միջազգային պայմանագրով:».

6) հոդվածը լրացնել 9.1-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«9.1. Օպերատորն իրավունք չունի իր անվանման մեջ ապակողմնորոշիչ այնպիսի բառեր օգտագործել, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ նրա ֆինանսական վիճակի, իրավական կարգավիճակի կամ մատուցվող ծառայությունների վերաբերյալ:»:

Հողված 36. Օրենքի 104-110-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հողված 37. Օրենքի 111-րդ հոդվածի հոդվածի 2-րդ մասը «չափանիշներ» բառից հետո լրացնել «, ինչպես նաև օպերատորի գործարար գործընթացների անընդհատության ապահովման նվազագույն պահանջներ» բառերով:

Հողված 38. Օրենքի 113-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հողված 39. Օրենքի 114-րդ հոդվածում՝

1) 2-րդ և 3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

2) 4-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն մասով նախատեսված վերահսկող ծառայության անդամ կամ աշխատակից կարող են լինել միայն «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ համապատասխան պաշտոնի համար մասնագիտական գիտելիքների թեստավորում անցած և այդ թեստավորման արդյունքներով

բավարար միավորներ հավաքած լինելը հավաստող վավեր վկայական ունեցող տվյալ պաշտոնի համար հավուր պատշաճին համապատասխանող անձինք:»:

Հոդված 40. Օրենքի 115-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 115. Շուկայի կանոնները

1. Շուկայի կանոնները հաստատվում են օպերատորի դիտորդ խորհրդի կողմից:

2. Շուկայի կանոնների բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները սահմանվում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

3. Օպերատորի և շուկայի մասնակցի կամ թողարկողի միջև կնքված՝ շուկային մասնակցելու, թողարկողի արժեթղթերի՝ շուկայում առևտրին թույլատրելու, շուկայում արժեթղթերով գործարքներ կնքելու կամ այլ ծառայությունների համար վճարումների վերաբերյալ պայմանագիրը շուկայի կանոնների մաս չի համարվում:

4. Օպերատորը պարտավոր է մինչև իր կողմից շուկայի կանոնները հաստատելը շահագրգիռ անձանց հնարավորություն ընձեռել ներկայացնելու կանոնների վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ և փաստարկներ:

5. Կենտրոնական բանկն իրավունք ունի իր որոշմամբ կարգադրելու օպերատորին իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում որոշակի կանոն (կանոններ) կամ դրա իրավասության շրջանակներում որոշակի որոշում ընդունելու կամ այլ գործողություն ձեռնարկել, եթե Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով օպերատորը չի կատարում իր կանոններով սահմանված գործառնությունները կամ պահանջները կամ չի ապահովում իր կանոններով սահմանված պահանջների պահպանումը, կամ նման կանոնները կամ գործողություններն անհրաժեշտ են ներդրողների պաշտպանության համար: Կենտրոնական բանկի՝ սույն մասով նախատեսված կարգադրությունը պարտադիր է օպերատորի կողմից կատարման համար:

6. Օպերատորը պարտավոր է շուկայի կանոնները կամ դրանց փոփոխությունները Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու օրվանը հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք հրապարակել իր պաշտոնական ինտերնետային կայքում: Կանոններն օպերատորը կարող է հրապարակել միայն Կենտրոնական բանկի կողմից դրանց գրանցումից հետո:»:

Հոդված 41. Օրենքի 116-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 42. Օրենքի 119-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«5. Սույն օրենքի 11-14-րդ գլուխների՝ արժեթղթերի առևտրին թույլտրվությանը վերաբերող դրույթները տարածվում են միայն սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արժեթղթերի և դրանց թողարկողների վրա: Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արժեթղթերը թույլատրվում են շուկայում առևտրին և վաճառվում են շուկայում տվյալ շուկայի կանոններին համապատասխան:»:

2) 6-րդ մասում «հոդվածով» բառերը փոխարինել «հոդվածի 2-րդ մասով» բառերով:

Հոդված 43. Օրենքի 121-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետում «բաժնետոմսերի» բառը փոխարինել «արժեթղթերի» բառով:

Հոդված 44. Օրենքի 125-րդ հոդվածի 4-րդ մասը «արժեթղթերի» բառից առաջ լրացնել «ոչ բաժնային» բառերով:

Հոդված 45. Օրենքի 126-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ կերպ՝ «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը չի տարածվում սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված արժեթղթերի թողարկողների վրա»:

2) 6-րդ մասում «127-րդ հոդվածի» բառերը փոխարինել «163-170-րդ հոդվածների» բառերով:

Հոդված 46. Օրենքի 127-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 47. Օրենքի 141-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «սույն» բառը:

Հոդված 48. Օրենքի 145-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 49. Օրենքի 147-րդ հոդվածի 2-րդ մասում «որոնք պետք է սահմանեն» բառերը փոխարինել «որոնք կարող են սահմանել» բառերով:

Հոդված 50. Օրենքի 148-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Արժեթղթերը հանձնելու առաջարկը պետք է արվի արդար գնով, որի հաշվարկման չափանիշները և պայմանները սահմանում է Կենտրոնական բանկը:»:

2) 3-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունն ստանալու համար արժեթղթերը հանձնելու առաջարկությամբ հանդես եկող անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում արժեթղթերը հանձնելու առաջարկի հայտարարագիր (այսուհետ սույն գլխում՝ հայտարարագիր) և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ: Սույն մասով նախատեսված փաստաթղթերի և տեղեկությունների՝ Կենտրոնական բանկ ներկայացման կարգը և այդ փաստաթղթերի մեջ ներառվող տեղեկատվության նկատմամբ պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:»:

3) 4-րդ մասում «ընդունում է հայտարարագիրը» բառերը փոխարինել «ընդունում է սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները» բառերով:

4) 5-րդ մասը առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով արժեթղթերը հանձնելու առաջարկով հանդես եկող անձի համար կարող են սահմանվել արժեթղթերը հանձնելու առաջարկի մասին արժեթղթերի սեփականատերերին տեղեկացնելու լրացուցիչ ձևեր:»:

Հոդված 51. Օրենքը լրացնել 148¹-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 148¹. Թողարկողի կառավարման մարմինների պարտականությունները արժեթղթերը հանձնելու առաջարկի ընթացքում

1. Արժեթղթերը հանձնելու առաջարկի դեպքում թողարկողի կառավարման մարմինների անդամները պարտավոր են գործել բարեխղճորեն՝ ելնելով թողարկողի և բաժնետերերի շահերից:

2. Թողարկողի կառավարման մարմիններն իրավունք չունեն իրականացնել այնպիսի գործողություններ կամ դրսևորել այնպիսի անգործություն, որոնք էապես կվատթարացնեն թողարկողի ֆինանսական վիճակը կամ այլ կերպ կխոչընդոտեն արժեթղթերը հանձնելու առաջարկի իրականացումը (ներառյալ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկումը, որի արդյունքում կսահմանափակվի արժեթղթերը հանձնելու առաջարկությամբ հանդես եկող անձի կողմից թողարկողի կանոնադրական կապիտալում հայտարարագրով նախատեսված չափով մասնակցության ձեռքբերումը)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ թողարկողի բաժնետերերի ժողովը այդպիսի գործողությունների իրականացմանը հավանություն է տվել:

3. Թողարկողի կառավարման մարմիններն իրավունք ունեն իրենց նախաձեռնությամբ փնտրել (հրավիրել) սույն օրենքի 149¹-րդ հոդվածով նախատեսված արժեթղթերը հանձնելու մրցակցային առաջարկ, որի համար թողարկողի բաժնետերերի ժողովի նախնական հավանություն չի պահանջվում:

4. Թողարկողի դիտորդ (տնօրենների) խորհուրդը (առկայության դեպքում) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով պարտավոր է հրապարակել փաստաթուղթ, որը պետք է սահմանի արժեթղթերը հանձնելու առաջարկի վերաբերյալ իր կարծիքը, այդ կարծիքի հիմքում ընկած պատճառները, ինչպես նաև խորհրդի տեսակետը ընկերության գործունեության և աշխատակիցների վրա առաջարկի իրականացման հետևանքների վերաբերյալ:»:

Հոդված 52. Օրենքի 149-րդ հոդվածում`

1) 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ` հետևյալ բովանդակությամբ. «Եթե արժեթղթերը հանձնելու առաջարկի գործողության ժամկետում Կենտրոնական բանկը գտնում է, որ արժեթղթերը հանձնելու առաջարկով հանդես եկող անձի կողմից խախտվել են օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները, Կենտրոնական բանկը կարող է իր նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կասեցնել արժեթղթերը հանձնելու առաջարկի իրականացումը, և միաժամանակ սահմանել ժամկետ, որի ընթացքում արժեթղթերը հանձնելու առաջարկով հանդես եկող անձը պարտավոր է վերացնել կասեցման համար հիմք հանդիսացող խախտումները:»:

2) հոդվածը լրացնել 6-րդ մասով` հետևյալ բովանդակությամբ.

«6. Արժեթղթերը հանձնելու առաջարկով հանդես եկող անձի կողմից սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով արժեթղթերը հանձնելու առաջարկի պայմանները փոփոխվելու դեպքում արժեթղթերի սեփականատերերին դրամական միջոցներով վճարելու պարտավորությունը չի կարող փոխարինվել արժեթղթերով կամ այլ միջոցներով վճարելու պարտավորությամբ:»:

Հոդված 53. Օրենքը լրացնել 149¹-րդ հոդվածով` հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 149¹. Արժեթղթերը հանձնելու մրցակցային առաջարկը

1. Արժեթղթերը հանձնելու մրցակցային առաջարկը արժեթղթերը հանձնելու առաջարկն է` ուղղված թողարկողի այն արժեթղթերի ձեռքբերմանը, որոնց ձեռքբերման համար արդեն ներկայացվել է արժեթղթերը հանձնելու առաջարկ (արժեթղթերը հանձնելու նախնական առաջարկ):

2. Մրցակցային առաջարկը չի կարող արվել նախնական առաջարկը ներկայացրած անձի հետ սույն օրենքի 151-րդ հոդվածով նախատեսված համատեղ գործելու համաձայնությամբ հանդես եկող անձի կողմից, կամ այն անձի կողմից, որը արժեթղթերը հանձնելու նախնական առաջարկով հանդես եկող անձի կողմից լիազորված է հանձնման ենթակա արժեթղթերի թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովում իր անունից քվեարկելու իրավասությամբ:»:

Հոդված 54. Օրենքի 151-րդ հոդվածում «օրենքի 148-րդ, 149-րդ, 150-րդ և 152-րդ հոդվածների» բառերը փոխարինել «գլխի» բառով, իսկ «սույն գլխի իմաստով» բառերը հանել:

Հոդված 55. Օրենքը լրացնել 151¹-րդ հոդվածով` հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 151¹. Արժեթղթերով հավաստվող իրավունքների սահմանափակումները

1. Թողարկողի կանոնադրությամբ կամ թողարկողի և բաժնետերերի կամ բաժնետերերի միջև կնքված պայմանագրերով սահմանված այն դրույթները, որոնք սահմանափակում են բաժնային արժեթղթերի փոխանցումը, արժեթղթերը հանձնելու առաջարկի գործողության ժամկետում չեն գործում արժեթղթերը հանձնելու առաջարկով հանդես եկող անձին արժեթղթերի փոխանցման նկատմամբ:

2. Արժեթղթերը հանձնելու առաջարկի գործողության ժամկետում թողարկողի կանոնադրությամբ կամ թողարկողի և բաժնետերերի միջև կնքված պայմանագրերի համաձայն արժեթղթերով հավաստվող ձայնի իրավունքը սահմանափակող դրույթը չի գործում և արտոնյալ բաժնետոմսերը ձայնի իրավունք չեն տալիս այն դեպքում, երբ բաժնետերերի ընդհանուր ժողովում

քննարկվում է սույն օրենքի 148¹-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արժեթղթերը հանձնելու առաջարկի իրականացմանը խոչընդոտող գործողություններ իրականացնելու հարցը:»:

Հոդված 56. Օրենքի 152-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Կարգավորվող շուկայում թողարկողի բաժնետոմսերի առևտրին թույլտվության դադարեցման հարցի քննարկման նպատակով բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը բաժնետերերին ուղարկելու հետ միաժամանակ թողարկողը պարտավոր է ներկայացնել նաև Կենտրոնական բանկին, կարգավորվող շուկայի օպերատորին, ինչպես նաև հրապարակել իր ինտերնետային կայքում, եթե օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն՝ դա ավելի շուտ չի իրականացվել:»:

2) 4-րդ մասը լրացնել 5-րդ և 6-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) իրավաբանական անձը ձեռք է բերել թողարկողի տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսը միևնույն խմբին պատկանող այլ իրավաբանական անձից և ձեռք բերելուց հետո շարունակում է պատկանել տվյալ խմբին.

6) անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր տվյալ ընկերության արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրականացման արդյունքում:»:

Հոդված 57. Օրենքը լրացնել 152¹-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 152¹. Արժեթղթերը հանձնելու առաջարկի արդյունքների հրապարակումը

1. Արժեթղթերը հանձնելու առաջարկով հանդես եկող անձը պարտավոր է հրապարակել արժեթղթերը հանձնելու առաջարկի արդյունքները Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:»:

Հոդված 58. Օրենքի 153-րդ հոդվածը «բաժնետիրական ընկերություններում» բառերից հետո լրացնել «(բացառությամբ բաց ներդրումային ֆոնդերում)» բառերով:

Հոդված 59. Օրենքի 163-րդ հոդվածը լրացնել նոր մասով հետևյալ բովանդակությամբ.

«6. Սույն հոդվածով սահմանված պահանջները չեն տարածվում՝

1) Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության համայնքների և Կենտրոնական բանկի վրա.

2) այն թողարկողների վրա, որոնց կողմից թողարկված արժեթղթերը երաշխավորված են Հայաստանի Հանրապետության կամ Կենտրոնական բանկի կողմից.

3) սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված արժեթղթերի թողարկողների վրա:»:

Հոդված 60. Օրենքի 164-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 164. Ներքին տեղեկությունների բացահայտման հետաձգումը

1. Եթե ներքին տեղեկությունների բացահայտումը կարող է էապես վնասել թողարկողի օրինական շահերը, ապա վերջինս կարող է իր պատասխանատվությամբ հետաձգել ներքին տեղեկությունների բացահայտումը պայմանով, որ նման հետաձգումը չի հանգեցնի հանրության ապակողմնորոշմանը և իր կողմից կապահովվի ներքին տեղեկությունների գաղտնիությունը:

2. Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել այն իրավիճակների ոչ սպառիչ ցանկը, որոնց դեպքում ներքին տեղեկությունների բացահայտումը կարող է վնասել թողարկողի օրինական շահերը, ինչպես նաև ներքին տեղեկությունների գաղտնիության պահպանման նկատմամբ պահանջները:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում թողարկողը պարտավոր է ներքին տեղեկությունները ներկայացնել միայն Կենտրոնական բանկ՝ դրա չբացահայտման անհրաժեշտության

գրավոր հիմնավորման հետ մեկտեղ: Թողարկողը պարտավոր է նշել նաև այն ժամանակահատվածը, որի ընթացքում նշված տեղեկությունները պետք է համարվեն գաղտնի: Նշված ժամկետի ավարտից անմիջապես հետո թողարկողը պարտավոր է բացահայտել այդ տեղեկությունները սույն օրենքի 163-րդ հոդվածով սահմանված կարգով, ինչպես նաև ներկայացնել այդ տեղեկություններն այն շուկայի օպերատորին, որտեղ առևտրին թույլատրված են իր կողմից թողարկված արժեթղթերը:

4. Կենտրոնական բանկը սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դիմումը ստանալու պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է ընդունում տեղեկությունների գաղտնիությունը հարգելու կամ մերժելու մասին: Կենտրոնական բանկը մերժում է դրանց գաղտնիությունը, եթե բավարար հիմնավորումներով գտնում է, որ այդ տեղեկություններն էական են, եւ դրանք անմիջապես չհրապարակելը կարող է վտանգել ներդրողների շահերը կամ տվյալ արժեթղթերի արդար գնագոյացումը, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերի: Տեղեկատվության գաղտնիությունը մերժելու օրվանից՝ 3 օրվա ընթացքում, թողարկողը պարտավոր է բացահայտել այդ տեղեկությունները սույն օրենքի 163-րդ հոդվածով սահմանված կարգով, ինչպես նաև ներկայացնել այդ տեղեկություններն այն կարգավորվող շուկայի օպերատորին, որտեղ առևտրին թույլատրված են իր կողմից թողարկված արժեթղթերը:

5. Կենտրոնական բանկը կարող է բացահայտել գաղտնի համարվող տեղեկությունները մինչև սույն հոդվածի 3-րդ մասում նշված գաղտնիության ժամկետի ավարտը, եթե՝

1) այլևս առկա չեն այդ տեղեկությունները գաղտնի համարելու հիմքերը.

2) թողարկողը չի ապահովել այդ տեղեկությունների գաղտնիությունը, և տեղեկությունները բացահայտվել են երրորդ անձանց:

6. Կենտրոնական բանկն իրավունք ունի իր նորմատիվ իրավական ակտերով սահմանելու այն տեղեկությունների ցանկը և նկարագրությունը, որոնց գաղտնիությունը Կենտրոնական բանկն ամեն դեպքում հարգում է:

7. Եթե թողարկողը չի կատարում իր պարտականությունը սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում, ապա Կենտրոնական բանկը կարող է ինքնուրույն ուղարկել այդ տեղեկությունները շուկայի օպերատորին և հրապարակել, ինչը թողարկողին չի ազատում օրենքով սահմանված պատասխանատվությունից:

8. Գաղտնի տեղեկությունների և փաստաթղթերի ներկայացման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Կենտրոնական բանկը պարտավոր է ներքին կանոնակարգերով և այլ միջոցառումների ձեռնարկմամբ բացառել նման տեղեկությունների և փաստաթղթերի հրապարակումը:

9. Շուկայի օպերատորը շուկայի կանոններով կարող է սահմանել ներքին տեղեկությունների բացահայտման լրացուցիչ պահանջներ թողարկողների համար:»:

Հոդված 61. Օրենքի 171-րդ հոդվածում.

1) 2-րդ մասի 5-րդ կետում «սույն հոդվածի 1-ին մասի» բառերը փոխարինել «սույն մասի»

2) 4-րդ մասի 2-րդ կետում «հետ գնելը» բառերը փոխարինել «ձեռք բերելը» բառերով:

Հոդված 62. Օրենքի 178-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 63. Օրենքի 179-րդ հոդվածի 1-րդ և 2-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 64. Օրենքի 180-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 180. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնները

1. Կենտրոնական դեպոզիտարիան իր գործառնությունների պատշաճ իրականացումն ապահովելու համար պարտավոր է ընդունել կանոններ, որոնց բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները սահմանվում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման,

վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

2. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է մինչև իր կողմից շուկայի կանոնները հաստատելը շահագրգիռ անձանց հնարավորություն ընձեռել ներկայացնելու կանոնների վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ և փաստարկներ:

3. Կենտրոնական բանկն իրավունք ունի իր որոշմամբ կարգադրելու Կենտրոնական դեպոզիտարիային իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում որոշակի կանոն (կանոններ) կամ դրա իրավասության շրջանակներում որոշակի որոշում ընդունելու կամ այլ գործողություն ձեռնարկել, եթե Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով Կենտրոնական դեպոզիտարիան չի կատարում իր կանոններով սահմանված գործառնությունները կամ պահանջները կամ չի ապահովում իր կանոններով սահմանված պահանջների պահպանումը, կամ նման կանոնները կամ գործողություններն անհրաժեշտ են ներդրողների պաշտպանության համար: Կենտրոնական բանկի՝ սույն մասով նախատեսված կարգադրությունը պարտադիր է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կատարման համար:

4. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է իր կանոնները կամ դրանց փոփոխությունները Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու օրվանը հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք հրապարակել իր պաշտոնական ինտերնետային կայքում: Կանոններն Կենտրոնական դեպոզիտարիան կարող է հրապարակել միայն Կենտրոնական բանկի կողմից դրանց գրանցումից հետո:»:

Հոդված 65. Օրենքի 181-րդ հոդվածի 2-րդ մասում «գրանցման և (կամ)» բառերը հանել, իսկ «դեպոզիտարիայի» բառից հետո լրացնել «գործունեության» բառով:

Հոդված 66. Օրենքի 182-րդ հոդվածի երրորդ մասից հանել «սույն» բառերը:

Հոդված 67. Օրենքի 184-189-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 68. Օրենքի 190-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ նախադասությունը «նախաձեռնությամբ» բառերից հետո լրացնել «, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, » բառերով:

Հոդված 69. Օրենքի 193-րդ հոդվածի 3-րդ մասում «քսան օր» բառերը փոխարինել «քսան աշխատանքային օր» բառերով, իսկ «եռօրյա ժամկետում» բառերը փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 70. Օրենքի 195-րդ հոդվածի 1-ին մասում «4-րդ հոդվածի 1-ին կետով» բառերը փոխարինել «4-րդ հոդվածի 2-րդ կետով» բառերով:

Հոդված 71. Օրենքի 199-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ. «Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից գործառնական ռիսկերի կառավարման նկատմամբ պահանջներ, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի գործարար գործընթացների անընդհատության ապահովման նվազագույն պահանջներ:»:

Հոդված 72. Օրենքի 206-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «նրանց կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող» բառերը փոխարինել «նրանց՝ «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պատասխանատու աշխատակից հանդիսացող» բառերով:

2) 5-րդ մասում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին»» բառերով:

Հոդված 73. Օրենքի 207-րդ հոդվածի 2-րդ մասում «, բանկային, առևտրային գաղտնիքի կամ ծառայողական տեղեկությունների» բառերը փոխարինել «, ներդրումային, բանկային, առևտրային գաղտնիքի» բառերով:

Հոդված 74. Օրենքի 209-րդ հոդվածում`

1) 1-ին մասում` «Սույն օրենքը» բառերը փոխարինել «Սույն օրենքի, դրա հիման վրա ընդունված» բառերով, իսկ 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ`

«4. չառարկելու մասին նամակի հետ կանչում:»:

2) 2-րդ մասում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին»» բառերով:

Հոդված 75. Օրենքի 212-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ` հետևյալ բովանդակությամբ`

«Հոդված 212. Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը

1. Սույն օրենքով նախատեսված լիցենզավորվող անձի լիցենզիան ամբողջությամբ կամ առանձին ներդրումային ծառայության (ծառայությունների) մասով կարող է, որպես պատասխանատվության միջոց, ուժը կորցրած ճանաչվել Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, եթե`

1) լիցենզավորվող անձը լիցենզիա (լրացուցիչ թույլտվություն) ստանալուց հետո 12 ամիս անընդմեջ լիցենզավորվող գործունեությունը չի իրականացրել (չի մատուցել համապատասխան ներդրումային ծառայությունը):

2) լիցենզավորվող անձը հրապարակել կամ Կենտրոնական բանկ է ներկայացրել (այդ թվում` լիցենզավորման գործընթացում) ապակողմնորոշիչ, ոչ արժանահավատ տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր:

3) լիցենզավորվող անձը կամ նրա ղեկավարները թույլ են տվել սույն օրենքի, տվյալ լիցենզավորվող անձի գործունեությունը կարգավորող այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի կամ իր ներքին իրավական ակտերի պահանջների պարբերական (երկու և ավելի) խախտումներ:

4) լիցենզավորվող անձն իրականացրել է սույն օրենքի համաձայն իրեն չթույլատրված գործունեություն:

5) լիցենզավորվող անձը թույլ է տվել այնպիսի արարք (գործողություն կամ անգործություն), որը Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով վտանգել է ներդրողների շահերը կամ արժեթղթերի շուկայի բնականոն և իրավաչափ գործունեությունը կամ հանգեցրել է հրապարակման կամ տրամադրման ոչ ենթակա տեղեկատվության արտահոսքի:

6) լիցենզավորվող անձը չի իրականացրել կամ ոչ պատշաճ է իրականացրել Կենտրոնական բանկի կողմից օրենքի համաձայն տրված հանձնարարականները կամ կարգադրությունները:

7) խախտվել են օրենքով և դրա հիման վրա Կենտրոնական բանկի ընդունած նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվները` Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափով:

8) խախտվել են հաշվապահական հաշվառում վարելու կանոնները կամ ֆինանսական կամ այլ հաշվետվությունների ներկայացման կամ հրապարակման կարգը կամ պայմանները:

Հոդված 76. Օրենքի 213-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ` հետևյալ բովանդակությամբ`

«Հոդված 213. Չառարկելու մասին նամակի հետ կանչումը

1. Սույն օրենքով նախատեսված լիցենզավորվող անձի ղեկավարին կամ պատասխանատու աշխատակցին տրված չառարկելու մասին նամակը, որպես պատասխանատվության միջոց, կարող է հետ կանչվել Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե նա՝

- 1) դիտավորությամբ խախտել է օրենքը կամ այլ իրավական ակտը.
- 2) կատարել է այնպիսի գործողություններ կամ ցուցաբերել է այնպիսի անգործություն, որի հետևանքով լիցենզավորվող անձը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնասներ.
- 3) պաշտոնավարման ընթացքում վարել է անհիմն և ներդրողների օրինական շահերը վտանգող գործունեություն կամ դրսևորել է անազնիվ կամ անբարեխիղճ վերաբերմունք իր ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ լիցենզավորվող անձի կամ նրա հաճախորդների հանդեպ ստանձնած պարտականությունների նկատմամբ.
- 4) խոչընդոտել է վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողություններին կամ չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել Կենտրոնական բանկի՝ օրենքի հիման վրա տրված հանձնարարականները կամ կարգադրությունները.
- 5) գործունեության ընթացքում կատարել է անձնական շահերից բխող այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործունեություն, որը հակասում է լիցենզավորվող անձի կամ ներդրողների օրինական շահերին:»:

Հոդված 77. Օրենքի 217-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 217. Պատասխանատվությունը շուկայի չարաշահումների համար

1. Յուրաքանչյուր անձ, որն ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ կատարել է սույն օրենքի 162-րդ կամ 171-րդ հոդվածով արգելված գործողություններ կամ գործարքներ, պատասխանատվություն է կրում ցանկացած անձի հասցրած վնասի համար, որը տվյալ գործողության կամ գործարքի հետևանքով խեղաթյուրված գնով արժեթուղթ է գնել կամ վաճառել:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներով հայցային վաղեմությունը մեկ տարի է խախտումը բացահայտելու օրվանից, բայց ոչ ավելի, քան երեք տարի՝ խախտումը կատարելու օրվանից:»:

Հոդված 78. Օրենքի 220-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասից «գրանցելու և լիցենզիա տալու, հաշվառելու,», ինչպես նաև «, հավանություն տալու» բառերը հանել.
- 2) 2-րդ մասում «Գրանցելու և լիցենզիա տալու, հաշվառելու, նախնական համաձայնություն տալու» բառերը փոխարինել «Նախնական համաձայնություն տալու» բառերով, իսկ «, հավանություն տալու» բառերը հանել:

Հոդված 79. Օրենքի 221-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 80. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: